ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1962 Общественные науки

Ա. Ս. Ռեժանյան

ՀԱՅ ԳՅՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Հայ գյուղագրության պատմությունը մեր գրականագիտության տակավին չուսումնասիրված մարզն է։

Գյուղագրության, իբրև գրական դպրոցի ծնունդը, նրա զարգացման սոցիալ-տնտեսական պատճառների բացահայտումը՝ սովետական գրականագիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է։ Այդ ուղղությամբ առաջին քայլը մեզանում արել է գրականագետ պրոֆեսոր Արսեն Տերտերյանը 1927 թ. հրատարակած «Նկատողություններ մեր գյուղագիրների մասին» իր աշխատությամբ, որտեղ ուսումնասիրության նյութ դարձնելով գյուղագրությունը, հեղինակը ելնում էր նրա արդիական նշանակությունից ինչպես գեղարվեստական գրականության, այնպես էլ հասարակական զարգացման պրոցեսը մեկնաբանելու իմաստով։ «Հայ գյուղագիրների գրական ուսումնասիրությունը,— գրում է նա,—անհրաժեշտ է, ճիշտ այնպես, ինչպես և հայ գյուղի անցյալի ուսումնասիրությունը»[1]։

19-րդ դարի հայ գյուղի սոցիալ-տնտեսական կյանքի պատկերը ներկայացնող վիճակագրական տվյալները համադրելով գյուղագրության տվյալ գեղարվեստական փաստերին, Տերտերյանը ընդգծում է վերջիններիս ճշմարտացիությունն ու համոզչականությունը։ Նա միաժամանակ զուգահեռներ անցկացնում ռուս նարոդնիկական գրողների ու հայ գյուղագիրների միջև՝ նկատելով վերջիններիս նրանց հետ ունեցած ընդհանրությունը, այդ համարում է ոչ թե պարզապես ընդօրինակման արդյունք, այլ բացատրում է սոցիալ-տնտեսական կյանքի համանման կողմերով։ Տերտերյանը տեսավ մեր գյուղագիրների յուրահատկությունը, գնահատեց կապիտալի դեմ ուղղված նրանց անհաշտ պայքարը։ Նա քննադատեց նաև գյուղագիրների սահմանափակությունը և ցույց տվեց, որ նրանք՝ շփոթելով սոցիալական պատճառն ու հետևանքը, կռվում էին ոչ այնքան պատճառների, որքան հետևանքների դեմ։

Հարգելի գրականագետի կատարած այդ շնորհակալ աշխատանքն իր ճիշտ հարցադրումներով հանդերձ զերծ չէ որոշ թերություններից։ Նշենք ամենից առաջ այն, որ ելնելով սխալ հայեցակետից, Տերտերյանը հայ գյուղագրության պատմությունն սկսում է անցյալ դարի 40-ական թվականներից և հասցնելով մինչև իր օրերը, Աբովյանից—Բակունց, գրեթե բոլորին, բացառությամբ Նար-Դոսի և Շիրվանզադեի, համարում է հայ գյուղագիրներ, այդ դպրոցի գոյության շրջանը հաշվելով մոտ մեկ հարյուրամյակ, թեև իրականում այն ունեցել է հիսունամյա պատմություն։ Բացի այդ՝ որոշ հեղինակների գնահատելիս, հանգուցյալ պրոֆեսորը նրանց մեխանիկորեն հարմարեցրել է նարոդնիկական հայտնի թեորիայի պատրաստի սխեմաներին, մոռանալով, որ գրողն իր ստեղծագործության թույլ և ուժեղ կողմերով բարդ անհատականու-

1 Ա. Տերտերյան, Նկատողություններ մեր գյուղագիրների մասին, Երևան, 1927, էջ 12.

թյուն է, իսկ նարոդնիկական գաղափարախոսության և հայ գյուղագրության փոխհարաբերության հարցը շատ առավել բարդ է, քան այն կարող է թվալ առաջին հայացքից։

Տերտերյանից հետո առանձին գյուղագիրների հրատարակության առիթով, այդ ուղղությամբ օգտակար աշխատանք են կատարել նաև գրականագետներ Հարություն Մկրտչյանը[2], Եղիշե Պետրոսյանը[3] և Արամ Ինճիկյանը[4]։ Այսուհանդերձ մենք դեռևս չունենք հայ գյուղագրության պատմություն, որի ստեղծման ճանապարհին մեր առաջ ծառացած, գիտական լուսաբանության կարոտ առաջնահերթ խնդիրներից մեկը, ինչպես ասացինք, նարոդնիկական գաղափարախոսության և հայ գյուղագրության փոխհարաբերության հարցն է։ Այդ հարցին պատասխանելուց առաջ անհրաժեշտ է նշել, որ նարոդնիկությունը բարդ երևույթ էր ռուս հասարակական մտքի և ազատագրական շարժման պատմության մեջ։ Լենինն այս գնահատում է որպես գյուղացիական դեմոկրատիայի գաղափարախոսություն և Ռուսաստանի ազատագրական պայքարը սկսած 1861 թվականից մինչև 1895 թվականը համարում նարոդնիկության էպոխա։ Սակայն նարոդնիկությունը չի եղել միատարր։ Նրա զարգացման մեջ նշվում է երկու էտապ. հին ռուսական կամ ռևոլյուցիոն նարոդնիկություն (Գերցեն, Չերնիշևսկի) և ռեակցիոն նարոդնիկություն (Միխայլովսկի, Վորոնցով)։

Ո՞րն էր նարոդնիկության մեջ առաջադիմականը և ո՞րը հետադիմականը։ Լենինը ցույց է տվել, որ նարոդնիկական թեորիան ուտոպիական էր իբրև «սոցիալիստական» թեորիա և ռևոլյուցիոն է եղել որոշ էտապում իր հակաֆեոդալական բովանդակությամբ։ Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում համարելով պատահական երևույթ և շրջանցելով այն, ժխտելով բուրժուական քաղաքն ու բանվոր դասակարգի առաջատար դերը, նարոդնիկները կարծում էին, թե առանց կապիտալիզմի զարգացման, հենվելով լուսավորված գյուղացիական համայնքի վրա, կարելի է հասնել սոցիալիզմի։ Այդ գիտակցությամբ նրանք իդեալականացնում էին համայնքը, կոչելով մտավորականություն դեպի գյուղ, դեպի բուն ժողովուրդը։ Առաջադիմականը նարոդնիկների դեմոկրատիզմն էր։ Այն, որ նրանք պայքարում էին ճորտատիրության մնացուկների և բուրժուական շահագործման դեմ, հանուն աշխատավոր ժողովրդի ազատության։ Նարոդնիկները դնում էին նաև ցարիզմի դեմ քաղաքական պայքար ծավալելու խնդիրը, բայց մասսաների կազմակերպված պայքարի՝ ապրուստամբության անհրաժեշտության հարցը փոխարինում էին անհատական տեռորի պահանջով։

Իբրև գյուղացիական դեմոկրատիայի գաղափարախոսություն նարոդնիկությունն, իհարկե, չի եղել զուտ ռուսական երևույթ։ Այն պատմականորեն անհրաժեշտ ու անխուսափելի էր ոչ միայն Ռուսաստանի, իբրև ազրարային երկրի, այլև Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի համար, ուր շատ թույլ էր զարգացած արդյունաբերությունը, գերակշռողը՝ գյուղացիական տարրն էր և ստեղծված էին բոլոր պայմանները՝ նարոդնիկական գաղափարների տարածման համար։ Իսկ նարոդնիկական գաղափարների տարածողները

2 Տե՛ս Ա. Ագապյանի «Երկերի ժողովածուին» (1934) և Հ. Հովսեփյանի «Մոռացված աշխարհին» (1935) կցած առաջաբանները։

3 «Հայ գյուղագիրներ» ժողովածու, 1950, առաջաբանի փոխարեն։

4 Բարկենց, Նորեկ, 1961, առաջաբան։

մեջանում եղան հայ առաջավոր մտավորականության այն ներկայացուցիչները, որոնք 70-ական թվականներին՝ ընդգրկված լինելով համառուսական նարոդնիկական շարժման մեջ, ակտիվ մասնակցություն էին ունեցել Մոսկվայի, Պետերբուրգի և այլ քաղաքների նարոդնիկական խմբերին, իսկ հետագայում բանտարկվել ու աքսորվել Կովկաս։ Պատմությունից հայտնի է, որ 1875 թ. Անդրկովկասում հիմնադրված առաջին նարոդնիկական կազմակերպության 68 անդամներից հինգը[5] հայեր էին, որ 1881 թ. Մոսկվայի հայ ուսանողները կազմակերպել էին նարոդնիկական խմբակ «Հայրենասերների միություն» անունով։ «Հայրենասերների միությունը» 1884 թ. հրատարակեց նույնիսկ իր անլեգալ օրգան «Ազատության ավետաբեր» թերթը, բայց մի քանի համար միայն։ Վերջապես 1882 թ. վերջին և 1883 թ. սկզբին Թիֆլիսում կազմակերպվում է անլեգալ նարոդնիկական խմբակ բացառապես հայերից։ Խմբակի անդամներ՝ Գաբրիել (Գաբո) Միրզոյանը, Կոստանդին Մելիքյանը, Քրիստափոր Միքայելյանը, Ալեքսանդր Պետրոսյանը (նույն ինքը գյուղագիր Սանդալը), Խաչատուր Մալումյանը և Գևորգ Ղարաջյանը հաճախ լինում էին հայկական գավառներում, կապ պահպանում տեղի մտավորականության հետ, տանում կուլտուր-կրթական բացատրական աշխատանք։ Այդ խմբի նախաձեռնությամբ 1884 թ. հեկտոգրաֆի վրա տպագրվեց Նալբանդյանի «Երկրագործությունը», որ նրանց համար արտագրել էին արհեստավորաց դպրոցական՝ Միքայել Հովհաննիսյանն[6] ու Ալ. Սատուրյանը։

Հայ նարոդնիկներն, իհարկե, չեն ծավալել քաղաքական լայն գործունեություն։ Նրանց համար առաջնահերթը հայրենասիրական պրոպագանդան էր։ Պատահական չէ, որ 1885 թ. փետրվարին, ի պատասխան ցարի կողմից հայկական դպրոցների փակման, խմբակը հրատարակում է «Հայ եղբայրներ և հայ քույրեր» հայրենասիրական ծավալուն թռուցիկը, որն ավարտվում է ցարական բռնակալներին «մահվան վճիռ կարդալու» պահանջով։ Հայ նարոդնիկները չունեին իրենց ինչպես քաղաքական, այնպես էլ գրական օրգանը։ Ընդունելով հակակապիտալիստական դիրքորոշում, նրանք իրենց պրոպագանդայի համար ստիպված էին ապաստան գտնել նախ պահպանողական «Մեղու Հայաստանիի» (1863—1886) և «Նոր-Դարի» (1884—1908), ապա նաև «Փորձի» (1876—1881), «Գործի» (Շուշի—Թիֆլիս, 1882—1884), «Արձագանքի» (1882—1898), ինչպես նաև «Մշակի» (1872—1920) ու «Մուրճի» (1889—1907) էջերում, մանավանդ որ գյուղացիական հարցում կանգնած լինելով ցարական ռեֆորմը պաշտպանելու դիրքերում՝ «Մեղուն» և «Նոր-Դարը» ձգտում էին ռեֆորմի անշեղ կենսագործմանը Հայաստանում, պաշտպանելով նարոդնիկական ուտոպիական հայացքներ։ «Մեղվի» և «Նոր-Դարի» աշխատակիցներն իրենց հրապարակախոսական և գեղարվեստական գործերում ավելի կամ պակաս չափով բաժանում էին նարոդնիկական այդ իշխող տրամադրությունները։

Իբրև պատմականորեն կյանքի կոչված և իր ժամանակի համար կենսականորեն անհրաժեշտ դրական դպրոց, հայ գյուղագրությունը միաժամանակ զարգանում էր Արևելահայաստանում և Արևմտահայաստանում, եվ որովհետև

5 Հայ նարոդնիկության վերաբերյալ տվյալները վերցրել ենք Մ. Ներսիսյանի «Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում» (1940) գրքից։

6 Ապագա վիպասան Նար-Դոսը։

պատմականորեն տարբեր ճակատագրեր էին վիճակված մեր ժողովրդի երկու հատվածներին, այդ էլ պայմանավորեց գյուղագրության զարգացման տարբեր ընթացքը։ Սույն հոդվածի նպատակն է շոշափել միայն արեելահայ գյուղագրության զարգացման, նրա պատմության ու տեսության հետ կապված մի բանի առանցքային հարցեր։

Արևելահայ գյուղագրությունը սկիզբ է առնում անցյալ դարի 70-ական թվականներից, երբ Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման հետևանքով բայքայվում էր նահապետական գյուղն ու ծավալվում գյուղացիության պայքարը։ Գյուղացիական շարժման փաստեր են մեզ հայտնի Երևանի, Էջմիածնի, Նոր-Բայազետի և այլ գավառներից[7]։ Բուրժուական հարաբերությունների զարգացման այդ շրջանում էլ հայ իրականության մեջ ուժեղանում է հետադրբրբրությունը դեպի կապիտալիզմի հարվածներից խարխլվող գյուղը։ Այդ անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում գյուղագրության զարգացման համար։ Դրանում դժվար չէ համոզվել, եթե հիշելու լինենք, թե ովքե՞ր էին մեր գյուղագիրները։ Մասնագիտությամբ բժիշկ, իրավաբան, գյուղատնտես, իսկ հիմնականում ուսուցիչներ, որ ապրելով գավառում և ականատես լինելով այդ խավար ու մոռացված աշխարհի մարդկանց անմխիթար կյանքին, դարձել էին նրանց վշտերի ու իղձերի սրտացավ թարգմանը։

Գյուղագրության զարգացման մյուս ազդակը նարոդնիկությունն էր։ Բայց որովհետև մեր գյուղագրությունը սկսեց զարգանալ ռուս նարոդնիկական գրականությունից մեկ տասնամյակ ուշ, ապա հասկանալի պատճառներով ժառանգեց այդ գրականության ոչ թե ռևոլյուցիոն, այլ մանր բուրժուական ոգին։ Այսպիսով՝ իր ազգային երանգի մեջ լինելով նարոդնիկական գեղարվեստական գրականության տարատեսակը, մեր գյուղագրությունն իր հիմքում ունեցել է զարգացման տեղական ազդակներ։ Հենց դրանով է բացատրվում գյուղագրության զարգացման փաստը մեր գրականության նաև արևմտահայ հատվածում, որը նարոդնիկության հետ չառնչվելով հանդերձ, ի դեմս Թլկատինցու, Բաշալյանի և մյուսների տվեց գյուղագրության իր լավագույն ներկայացուցիչներին։

Որ ազգային արմատներով հայ գյուղագրությունը կապվում է մեր դասական գրականության՝ առաջին հերթին Աբովյանի, Պռոշյանի և Ալպայանի ստեղծագործական ավանդների յուրացման հետ, որն արտահայտվել է սյուժեի ընտրության, կերպարների ստեղծման, բարբառների և գեղարվեստական հնարանքների օգտագործման, ինչպես նաև ժողովրդական ստեղծագործությունից մեծապես օգտվելու մեջ, թեև գյուղագրական հերոսների գործունեությունը չունեցավ սոցիալական գիտակցված պայքարի այն բովանդակությունը, որպիսին ներկայացնում էր Աղայանի Արզումանի («Երկու քույր») և Պռոշյանի Հունոյի (համանուն վեպից) գործունեությունը։

Վերջապես չպետք է մոռանալ, որ արևելահայ գյուղագիրները, որոնց դանկը երկու տասնյակից ավելի է, յուրովի և տարբեր չափով են բաժանել նարոդնիկական հայացքներն ու տրամադրությունները։ Նրանց ռեալիստական ստեղծագործությունը հաճախ էլ հակասել է այդ դաղափարներին, թեև նրանք բոլորն էլ հետևում էին նարոդնիկության առաջադրած «հերոսի» և «ամ-

---

7 Տե՛ս Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս II, 1960, էջ 265—296։

լոխի» թեորիային և մանր-բուրժուական մտավորականության հետ կապում գործունեության որոշակի ծրագիր, որը հանգում էր գյուղացիներին լուսավորելու և նրանց իրավունքները պաշտպանելու կոնկրետ պահանջին։ Նարոդնիկական գաղափարներին արձագանքելու իմաստով չի կարելի, օրինակ, նույնացնել Ալ. Արարատյանի և Ագապյանի, Տեր-Ավետիքյանի և Ադելյանի, Նամալյանի և Մալխասյանի, Շահրիարի և Ջավախեցու, Ա. Շահնազարյանի և Մամիկոնյանի, Ճուղուրյանի և մանավանդ Սանդալի ստեղծագործությունը, որը հայ պրոֆեսիոնալ նարոդնիկներից էր, ծավալել է քաղաքական գործունեություն և իր գեղարվեստական ստեղծագործություններով մղել նարոդնիկական պրոպագանդա։ Ունենալով հասարակական ընդհանուր նպատակադրում, հայ գյուղագիրները բոլորն էլ պայքարել են ճնշման ու շահագործման, տգիտության ու հետամնացության դեմ, ժխտել բուրժուական քաղաքակրթությունն ու բարքերը։ Այդ էլ, անշուշտ, պայմանավորել է նրանց ստեղծագործական նմանությունները, թեև իբրև անհատականություններ նրանք անվիճելիորեն տարբեր են։ Եթե այդ տարբերությունը կոնկրետացնելու լինենք վերոհիշյալ հեղինակներից թեկուզ մի քանիսի վերաբերյալ, ապա պիտի ասենք, որ Արշակ Ագապյանի ստեղծագործությունը աչքի է ընկնում իր գաղափարական նպատակասլացությամբ։ Իբրև ստեղծագործող իր հասարակական իդեալներով Ագապյանը ոչ միայն տարբերվում, այլև անհամեմատ բարձր է մյուս գյուղագիրներից։ Բավական է հիշել թեկուզ այն փաստը, որ եթե սկզբում իբրև նորդարական նա անհնարին էր համարում գյուղացիության հողատարածության ավելացումը՝ ի հաշիվ ազնվականների, և սրանց ընդվզման մեջ արդարացի գայրույթի փոխարեն տեսնում էր մանր քինախնդրություն միայն, ապա հետագայում Ագապյանը բացահայտում է այդ պայքարի դասակարգային հիմքը և գյուղի սոցիալական վերափոխման ուղիների ընտրության ճանապարհին ապրելով ստեղծագործական էվոլյուցիա, գյուղացիներին լուսավորությամբ փրկելու առաջարկից անցնում է նրանց նյութական դրությունը բարվոքելու պահանջին։ «Ինչպես անհատի, այդպես էլ ժողովրդի բարոյականը սերտ կապ ունի նրա նյութականի հետ։ Նյութականը բարձրանալով՝ բարձրանում է և բարոյականը։ Յուրաքանչյուր բանիմացի պարտականությունն է,— ասում է նա,— աշխատել գյուղացու նյութական դրությունը բարձրացնել»[8]։

Ի տարբերություն Ագապյանի, Ադելյանը իր ստեղծագործություններում արձագանքելով նարոդնիկներին, իբրև գյուղափրկիչ ծրագիր առաջադրում է գյուղական կոոպերացիայի հիմնումը, մինչդեռ Ճուղուրյանի մոտ առավել ընդգծված է ակտիվ հերոսի և պասսիվ ամբոխի գաղափարը։ Նրա ստեղծագործության մեջ առկա է նաև 1905 թ. ռևոլյուցիայի արձագանքը («Ջատոյի բախտի անիվը»)։ Հովհաննես Մալխասյանը իրեն հուզող հարցերի պատասխանը որոնում է ոչ թե քաղաքականության, այլ բարոյախոսության մեջ։ Նրա ուշադրության կենտրոնում մարդն է իր հոգեբանական ուժեղ ապրումներով ու դպայական պոռթկումներով։ Նրա ստեղծագործություններում պատկերված է նաև կամազուրկ և արատավոր մարդկանց ողբերգությունը («Արցունքներ», «Հանցանք», «Անմեղ հոգին»), համեմատաբար մեծ տեղ է տրված գզտյացունց տեսարաններին, կյանքի նատուրալիստական վերարտադրությանը։

Արշակ Շահնազարյանի գյուղագրական պատմվածքներում առաջին պլանի

8 «Նոր-Դար», 1900, № 26։

վրա է մղվում անհատական տեսորը («Մացակի լոշը», «Էն սև օրերից»)։ Նրա հարստահարված գյուղացին չապավինելով և չվստահելով օրենքին, անհրաժեշտության դեպքում իր իսկ ձեռքով է տեսնում իր դատը։

Հիշյալ հեղինակները իրարից խիստ տարբերվում են նաև գրական վարպետությամբ ու խառնվածքով։ Դրանք հայ գյուղագրության մայր գետը կապող տարբեր վտակներն են՝ մեկը ջինջ ու շռնդալից, մյուսը՝ պղտոր ու հանդարտ։ Վերջապես մեր բազմաթիվ գյուղագիրներից բոլորը չէ, որ ունեցել են իրենց որոշակի աշխարհայացքն ու ուրույն ձայնը, գրել սիստեմատիկաբար, խմել, ինչպես ասվում է, սեփական բաժակից։ Նրանց մեջ եղել են և ուղեկիցներ, պատահական առիթներով գրողներ (Ս. Ումիկյան, Հ. Արղության, Ս. Տեր-Մելիքսեթեկյանց և ուրիշներ), որոնք եկել ու անցել են ոչ մի հետք չթողնելով ինչպես գրականության պատմության մեջ, այնպես էլ ժամանակակիցների հուշերում։ Բայց հենց այդ հանգամանքն էլ պարտավորեցնում է սովետական գրականագետներիս տալու գյուղագրության գիտական սահմանումը և մինչև այժմ պայմանականորեն «գյուղագիր» կոչված հեղինակների բանակից զատելու բուն գյուղագիրներին, որպեսզի հերթենք այն մեխանիկական սահմանումը թե գյուղագիրը—գյուղի մասին գրողն է, թեպետ այդ, ինչպես թելադրում է ինքը բառը, անհրաժեշտ, բայց ոչ միակ պայմանն է։

Հենց սկզբից ասենք, որ գյուղագիրը կարող է լինել և՛ բանաստեղծ, և արձակագիր, կարող է պատկերել նույնիսկ քաղաքային կյանքը, սակայն բոլոր դեպքերում մնալով կյանքի մակերեսային պատկերման շրջանակներում, չկատարելով սոցիալական խոշոր ընդհանրացումներ, գյուղագիրը ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ու հոգևոր կյանքի երևույթները դնահատում է սահմանափակ գյուղացու հայեցությամբ, չբարձրանալով մինչև ճշմարիտ և ընդհանրացնող արվեստը։ Ի տարբերություն կլասիկ ռեալիստի, որ՝ ընդհանրացումներ է կատարում զգայական ընդհանրացված կերպարների միջոցով, գյուղագիր ռեալիստն այդ անում է հրապարակախոսական եզրակացություններով, և որովհետև նա չունի կլասիկների գեղարվեստական ընդհանրացման ուժը, չի խորանում նաև գյուղական ընդհանրացված կերպարների ստեղծման մեջ։ Եվ ընդհակառակը. մեկանում քիչ չեն դեպքեր, երբ առանձին հեղինակներ (Մուրացան, Թումանյան) գյուղագիրներ չլինելով հանդերձ, իրենց մեծ տաղանդի շնորհիվ ստեղծել են դարեվերջի հայ գյուղի սոցիալական կյանքը պատկերող չգերազանցված գործեր։ Մուրացանն, օրինակ, ցույց տվեց հայ գյուղի շերտավորման ու քայքայման ողբերգական լինելը ոչ միայն անհատի, այլև գյուղական ամբողջ հասարակության սոցիալական դիմանկարը փոխելու իմաստով։ Ճիշտ է, նա էլ գյուղագիրների նման ազգի հիմքը համարում էր գյուղացուն, հայրենիքի հիմքը՝ գյուղը, և այդ գիտակցությամբ կոչանում մտավորականության, փրկելու հայրենիքի խարխլվող շենքը, բայց և այնպես Մուրացանը գյուղագիր չէր։ Նա գյուղագիր չէր ոչ միայն այն պատճառով, որ ի վերջո հրաժարվեց գյուղափրկիչ իր միամիտ ծրագրերից, ոչ միայն այն պատճառով, որ իր ստեղծագործության հիմնական մասով վերարտադրում էր քաղաքային կյանքն ու պատմական անցյալը, այլ առավելապես այն պատճառով, որ նրա գյուղական պատմվածքները իրենց ռեալիզմի ընդհանրացնող ուժով և արվեստի գերագանց մակարդակով պատռում էին գավառայնության դորշ քողը, դուրս գալիս համազգային-համամարդկային ասպարեզ։ Ի տարբերություն գյուղագիրների, Մուրացանի հերոսները չէին

փոթվում ոչ միմյանց, ոչ էլ ուրիշների հետ։ Նրա «Նոյի ագռավը» դարձավ ոչ միայն իր սեփական հերոսին, այլև առհասարակ գյուղին խորթացած մտավորականին բնութագրող մի հատուկ անուն, որի երկվորյակներին ամեն քայլափոխում կարելի էր հանդիպել կյանքում։ Այդ հանգամանքն էլ պայմանավորեց Նոյի ագռավ-Վանու անմահությունը ի հակակշիռ գյուղագրական շատ հերոսների, որ մեռնում էին իրենց հեղինակներից էլ առաջ։

Այսպիսով, ինչպես իր ողջ հայեցությամբ, այնպես էլ արտացոլման մեթոդով Մուրացանը կապվում է ոչ թե մեր գյուղագրության, այլ կլասիկ գրականության ավանդների հետ։ Ի դեպ, կարելի է ցույց տալ և հակառակ պրոցեսը, երբ մեր հեղինակները (Սանդալ, Մամիկոնյան, Մալխասյան) պատկերում են քաղաքի, նույնիսկ բանվորի կյանքը («Վիշապ», «Կյանք և փող», «Ավազի վրա»), բայց չհաղթահարելով գյուղական հայեցությունն ու գյուղագրության կաշկանդիչ նորմաները, չեն հասնում ռեալիստական արվեստի բարձր մակարդակին։

Հաջորդ խնդիրը՝ գյուղագրության մեր գրականության պատմության մեջ խաղացած դերի լուսաբանումն է, որովհետև գրականության զարգացման ընդհանուր պրոցեսում անժխտելի է գյուղագրության և՛ պատմական, և՛ գեղարվեստական նշանակությունը։

Ինչպես տեսանք, իրենց հասարակական իդեալներով, կյանքին ներկայացրած պահանջներով, գյուղագիրները հիմնականում քիչ են տարբերվում միմյանցից։ Նրանց հատուկ են այն հակասություններն ու ռահմանափակությունները, որ բնորոշ էին մեր գյուղացիությանն ու նրանց շահերի արտահայտիչ հայ նարոդնիկներին։ Այդ արտահայտվել է առաջին հերթին տեղայնության մեջ։ Նյութի ընտրության իմաստով գյուղագիրները կաշկանդված էին ոչ միայն հայրենի գավառի, այլ երբեմն նաև սոսկ ծննդավայրի սահմաններում, թեև նրանց շոշափած հարցերը դուրս էին գալիս նարոդնիկական զապատարախոսության նեղ շրջանակներից, հաճախ էլ հակադրվում նրանց։ Հասարակական կյանքին արձագանքելու անհրաժեշտությամբ գյուղագիրները դիմում էին հրապարակախոսության ժանրին, ստեղծելով կիսահրապարակախոսական-կիսագեղարվեստական բնույթի գործեր, որտեղ հրապարակախոսական տարրը իշխում է երկի գեղարվեստական հենքի վրա։ Այդ երկերում գեղարվեստական պատկերն ու հրապարակախոսի դիպուկ խոսքը միշտ չէ, որ ձուլվում են իրար, իսկ կոնֆլիկտներն ունենում են ավելի սոցիալական, քան հոգեբանական հիմք։ Այդ պատճառով նրանց մեջ առավել հաջողված են սոցիալական, քան հոգեբանական տիպերը։ Նույնիսկ գլխավոր հերոսները, քիչ բացառությամբ, գուրկ են լինում ներքնաշխարհից։ Պատմվող նյութի հավաստիությունը շեշտելու նպատակով գյուղագրական գործերում իբրև երկի հերոս հաճախ հանդես է գալիս հեղինակն ինքը, լույս սփռելով դեպքերի ու դեմքերի վրա։ Գյուղագիրներին մեծ մասամբ գրավչություն է ոչ թե մի կոնկրետ անհատի, այլ գյուղական ամբողջ համայնքի ճակատագիրը, նրա սոցիալական ծանր կյանքը։ Ուսումի գյուղագրության ուժը գյուղական կենցաղի և գյուղացու հոգեբանության ճշմարտացի վերարտադրության, «գյուղական մասսայի պոտենցիալը» գնահատելու մեջ է։ Գյուղագիրների անկեղծ ժողովրդայնությամբ է պայմանավորված նաև կյանքի ռեալիստական մեկնաբանումը, սոցիալական հակասությունների դրսևորումը։

Ճիշտ է, ռեալիստական ընդհանրացման տեսակետից գյուղագիրները

չհասան իրենց ուսուցիչներ՝ Աբովյանին, Պռոշյանին ու Աղայանին, սակայն գյուղական կյանքի առանձին մանրամասների նկարագրության մեջ նրանք նույնիսկ առաջ անցան իրենց ուսուցիչներից և տարբեր դիտակետերից պատկերելով այդ կյանքը, ստեղծեցին գյուղական միջավայրի ավելի ամբողջական և բազմերանգ պատկերներ։ Այնպես որ, եթե գյուղագիրների գեղարվեստական արժեքը հարաբերական է, կախված նրանց վարպետության աստիճանից, ապա պատմական-ճանաչողական արժեքը բացարձակ է։

Ի դեպ, առիթից օգտվելով ասենք, որ գյուղագրական այդ ռեալիզմը գրականության մեջ տիրապետություն հաստատած քննադատական ռեալիզմից որակապես տարբերվող մասնակի մեթոդ էր, որը հանդես գալով բիրտ նահապետականության քննադատությամբ, միաժամանակ արտահայտվում էր հոգուտ նրա անհետացող, բայց սրբագործված նորմաների։ Հետևաբար, ունենալով իր նախորդի մտրակող թափը, գյուղագրական ռեալիզմը չուներ նրան ընդհանրացնող ուժը։

Իբրև ռեալիստական գրականություն՝ գյուղագրությունն իր տեսակի մեջ տենդենցիոզ է, այն տարբերությամբ միայն, որ այստեղ տենդենցը ոչ թե զգուշությամբ թաքցվում, այլ բացահայտորեն մատուցվում է։ Ավելին. առաջնորդելով գաղափարը, գյուղագիրը հաճախ արվեստին տալիս է երկրորդական տեղ, որը պայմանավորում է նրանց երկերի գեղարվեստական մշակվածության և չափի զգացման պակասը, գրական թափթփվածությունը, կյանքի լուսանկարչական վերարտադրությունը, նատուրալիզմին տուրք տալը և այլն։ Կյանքի գեղարվեստական մեկնաբանումը նման դեպքում փոխարինվում է ազգագրությամբ կամ թե՝ տեղի տալիս մերկ փաստագրության։ Բայց բոլոր դեպքերում՝ հավատարիմ ռեալիզմի սկզբունքին, նրանք իրենց նկարագրությունների մեջ երբեք չեն իդեալականացնում պարսավելին կամ գունազարդում կյանքի մռայլը։ Ընդհակառակը. գյուղագիրները դատապարտում են ոչ միայն իշխանավորի վայրագությունը, այլև համարձակ ցույց տալիս ժողովրդի բացասական հատկությունները, որ պայմանավորված էին նրա նյութական ու հոգևոր կյանքի անմարդկային մակարդակով։

Հանդես գալով կապիտալիզմի բուռն զարգացման շրջանում, մեր գյուղագիրները չըմբռնեցին, իհարկե, նրա պատմական-առաջադիմական դերը։ Կապիտալիզմը գնահատելով միակողմանի՝ սոսկ գավառում գործած նրա սոցիալական չարիքի և նահապետական բարոյականության վրա ունեցած բացասական հետևանքների մասշտաբով, գյուղագիրները պատերազմ հայտարարեցին կապիտալիզմի կործանարար հետևանքներին։ Նրանք առավել ևս չհասկացան պրոլետարիատի պատմականորեն առաջադիմական դերը, ուստի բանվորին կամ չէին տեսնում կամ պատկերում էին կյանքի հատակում—անբարոյականության ու հարբեցողության որջերում (Շահնազարյան, Շահրիար)։

Սահմանափակ իրենց աշխարհայացքով, գյուղագիրները կապիտալիզմի գյուղ թափանցելը համարում էին ոչ թե հասարակության օրինաչափ զարգացման արդյունք, այլ արտաքին բացասական ազդակների հետևանք և հնարավոր համարում այդ բացասական երևույթների դեմ պայքարելը՝ առանց բուն հասարակության հիմքերին կպչելու։ Թեև կապիտալիզմի քննադատության մեջ գյուղագիրներն անհետևողական էին, բայց և այնպես բացահայտեցին նրա հիմնական խոցերն ու արատները, ոգևորեցին գյուղացիության պայքարը ընդդեմ կապիտալիստական ճնշման ու ֆեոդալական մնացուկների։

Հենց դրանով նրանք պատմականորեն կատարեցին դրական-առաջադիմական խոշոր գործ։

Հայ գյուղագիրները ոչ միայն չողջունեցին կապիտալիզմի մուտքը, այլև նրանցից ոմանք, նրան հակադրվելու անհրաժեշտությամբ սկսեցին իդեալականացնել գյուղական համայնքը՝ իբրև մարդկանց աղքատության ճիրաններից և կապիտալիզմի բացասական մյուս ազդեցություններից փրկող միակ հուսալի ապաստան։ Ի դեպ, համայնքի այդ իդեալականացումը որոշ հեղինակների մոտ ըստ էության ոչ թե նահանջ էր ռեալիզմից, այլ յուրովի բողոք բուրժուական հասարակության դեմ, քանզի դրանով նրանք, ի վերջո, արտահայտում էին հասարակության վերափոխման իրենց ձգտումը, բայց քաղաքականության մեջ առաջ նայելու փոխարեն նայելով հետ, հակադրվում էին պատմության առաջատար տենդենցներին։ Բայց այդ, ինչպես տեսանք, գյուղագիրների ոչ թե հանցանքը, այլ ակամա դժբախտությունն էր միայն։ Այնուամենայնիվ կասկածից վեր է, որ գյուղագրությունն իր բոլոր թերություններով հանդերձ, մեր իրականության մեջ նպաստել է քննադատական ռեալիզմի զարգացմանը, բերել որոշ նորույթներ նաև ժանրային իմաստով (գյուղական պատկեր, գյուղական զրույց, գյուղական պոեմ և այլն), պատասխանել ժամանակի հուզող շատ հարցերի։ Իսկ եթե այն հաճախ չի էլ կարողացել լիովին լուծել առաջադրված խնդիրները, գոնե սևեռել է ընթերցողի ուշադրությունը նրանց վրա, հրահրել կրքեր, բախել կարծիքներ, գյուղի փրկությունը դարձրել օրակարգի առաջնահերթ հարց։ Ահա ինչու Պլեխանովի ռուս նարոդնիկական գրականությանը տված այն բարձր և ճշմարիտ գնահատականը, թե՝ «մեր նարոդնիկական բելետրիստիկան լիովին ռեալիստական է... Նրա ռեալիզմը ջերմացված է զգացմունքով, տոգորված գաղափարով... Մասնագիտական ոչ մի հետազոտություն չի կարող փոխարինել նրանց նկարած ժողովրդական կյանքի պատկերներին»[9], վերաբերում է նաև հայ գյուղագրության լավագույն ստեղծագործություններին, որոնք իրենց ռեալիստական, գրեթե «փաստական» ճշտությամբ մեր ժողովրդի անցյալ դարի 70—900-ական թվականների կյանքի գեղարվեստականորեն հուզիչ, պատմականորեն ցնցող վավերագրեր են։ Բայց այս չի նշանակում, իհարկե, թե իր կեսդարյա գոյության շրջանում հայ գյուղագրությունը միշտ եղել է միատարր, և թե 70—80-ական թվականների մեր գյուղագրությունը որակապես չի տարբերվել 900-ական թվականների գյուղագրությունից։ Այդ տարբերությունը ակնբախ է և պայմանավորված նարոդնիկական գաղափարախոսության կրախով։

Ամբողջ հարցն այն է, որ 90-ական թվականներին, երբ հանդես եկավ պրոլետարիատը՝ սոցիալիստական գաղափարախոսության և դասակարգային պայքարի իսկական կրողը, երբ վերջնականապես սահմանազատվեցին դեմոկրատական ու սոցիալիստական ուղղությունները, մարքսիստները պայքար սկսեցին ռեակցիոն նարոդնիկության, իբրև բանվորական շարժման և մարքսիզմի գաղափարների տարածման արգելակողների դեմ։ 90-ական թվականների նարոդնիկությունը կորցնում է իր նախկին ռևոլյուցիոն ուժը և գյուղացիական դեմոկրատիայի գաղափարախոսությունից վերածվում լիբերալ բուրժուական գաղափարախոսության։ Գաղափարախոսության մեջ առաջացած այս

---

[9] Г. В. Плеханов, Избранные философские произведения, Москва, 1958, т. V, стр. 47

վերասերումը արտահայտվում է նաև գեղարվեստական դրականության՝ իբրև հասարակական գիտակցության ձևի մեջ։ Իսկ դրա արդյունքը լինում է այն, որ 80—90-ական թվականների ռուս նարոդնիկ գրողները չկարողանալով բացատրել հասարակական զարգացման օրինաչափ պրոցեսը, նահանջում էին ռեալիզմից, տուրք տալով ռոմանտիզմին։ Այդ հանգամանքը նկատելի է ռուս նարոդնիկ գրողներից հատկապես Նաումովի, Ս. Կարոնինի և Ն. Զլատովրատսկու ստեղծագործության մեջ։ Նույն օրինաչափությամբ 90-ական թվականներին հայ գյուղագրությունն էլ ապրում է գաղափարական ու ստեղծագործական նահանջ։ Եվ պատահական չէ օրինակ, որ եթե Սանդալի գյուղ մեկնող հերոսը համոզված իր դավանած գաղափարների անսխալականության մեջ՝ հասնում էր ինչ-որ արդյունքների («Փոքրիկ աստղ»), ապա Բարկենցի, Ան. Արովյանի և Ճուղուրյանի հերոսների գործունեությունը ոչ միայն չի պսակվում նույնատիպ հաջողությամբ, այլև նրանք ապրում են իրենց փայփայած պատրանքների խորտակման ողջ սարսափն ու ծանրությունը, դիմադարձ լինում դեպի նոր գաղափարներ (Ճուղուրյան)։

Ահա ինչու, անցյալ դարի 70-ական թվականներից պատմական անհրաժեշտությամբ կյանքի կոչված հայ գյուղագրական դպրոցը կարողացավ հարատևել փաստորեն մինչև մեր դարի տասական թվականները, որից հետո սպառած իր նարոդնիկական լիցքն ու չդիմանալով քննադատական ռեալիզմի տիրապետության շրջանում առաջացած գրական ուժեղ մրցակցությանը, իր 50-ամյա գործունեությունից հետո հոգևարք ապրեց, թեև նրա առանձին ներկայացուցիչներ (Մալխասյան, Ճուղուրյան, Շահնազարյան) շարունակեցին ստեղծագործել նաև սովետական շրջանում։